

Պրեսնանսից յետոյ խօսում է հռչակաւոր հոռետոր սօցիալիստ Ժօրէսը: Նա արծարծում է այն միտքը, թէ մակեդոնական շարժումը մի արժանի վարձատրութիւն է եւրօպային՝ նրա անտարբեր վերաբերմունքի համար դէպք 1895—1897 թ. հայկական դէպքերը: Վերջում Ժօրէսը կոչ է անում ֆրանսիացիներին, որ իւրանց հասարակական զօրեղ կարծիքով ստիպեն կառավարութեանը մի կտրուկ բայլ անել: Վերջը իր ճառում նորից կանգ է առնում հայ ժողովրդի յատկութիւնները՝ վրա և շնչաւոր է, որ հայերը միայն վաճառականական ազգ չեն:

— Հայերը գլխաւորապէս երկրագործ ժողովուրդ են, ասում է նա, նրանք ունեն երկրագործ ազգերի բոլոր յատկութիւնները և զինուորական ազգերի բոլոր բարեմասնութիւնները: Նրանց ընտանիքները բազմամարդ են, ցեղը շարունակ թարմանում ու աճում է: Հայերը պարծնում են իրանց ծագումով, որ ժամանակների գիշերովս մէջ է թաքնված: Նրանք հաւատարմութեամբ պահպանում են իրանց աւանդութիւնները, եռանդով պաշտպանում են մայրենի լեզուն, և չը նայելով ճնշումին ու հալածանքին, մինչև այժմ պահպանել են ազգայնական գլխաւոր յատկանիշները: Այդ ազգը մի բարձր իդէալ ունի, մի վարդապետ ազգային մասին է երազում...

Այդքան պերճախօս ճառերից յետոյ նախագահը կարդում է նշանաւոր մարդկանցից ըստածված համակրական հռչակներն ու հեռագիրները, և այդ ժողովը միաձայն որոշում է պահանջել ֆրանսիական կառավարութիւնից, որպէս զի նա եռանդուն միջոցներ ձեռք առնէ՝ Ռեյլիին դաշնագրի 23 և 61-րդ յօդուածները 1882 թ. և 1895 թ. յայտարարելով արված պահանջները իրագործել տալու համար:

Տիկին Ֆրանսուա այդ բոլոր ճառերի ու որոշումի թարգմանութիւնը առաջարկելով գերմանացիներին, մի զգացված առաջարկում կոչ է անում, որ նրանք էլ հետևեն ֆրանսիացիներին օրինակին, որ Գերմանիան էլ կանգնէ Ֆրանսիայի ընտրած մարդասիրական ճանապարհի վրա: Բայց բարասիրտ «Միխելը» քանի քանի անգամ է լսել այդպիսի զգացված կոչեր և դարձեալ իր եսասիրական ընդմիարիկը:

Ե. Թովչեան

ԲՈՐԵՆՈՒ ՆՈՐ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է սոսկալի գաղանը առաջին անգամը չէ, որ հարուստում է մեր գաւառի գիւղերին: Նրան զոհ են գնացել շատ անմեղ էակներ, իսկ ձեռք առնված միջոցներ և նախազգուշութիւններ համարեալ թէ գոյութիւն չունեն, որոնցով կարելի լինէր գոնէ մասամբ հաղթահարել դարձնել սարսնացուցիչ աղէտը, աչքի առաջ ունենալով նրա բնորոշ յատկութիւնները, զօրօրինակ՝ արթնուն մարդու վրա չը համարձակվելը, հրաւիրութիւնից քախչելը, նրա խիստ երկչոտութիւնը ու ձայնից վախենալը, մարդու վրա յարձակվելիս յատկապէս բերանից բռնելը, որից յետոյ ամենահաշտ աղամարդիկ անգամ յաղթվում են գաղանի և կործանող անխուսափելի է դառնում և յիշուած մօտ օրերս անընդհատ մէկը միւսի ետևից տեղի ունեցած նրա արշաւանքները և նրա քաջութիւնները հաստատում են վերոյիշեալը: Չարանեղ գաղանը յուլիսի 21-ին գիշերով մտնում է սոյն գաւառի Աղջաղալի գիւղը, յարձակվում է տասնիքի վրա քնած մի հսկայ տղամարդու վրա, բայց չէ կարողանում նպատակին հասնել, գլխից ծանր վիրաւորում է թշուառին ու փախչում:

Հետեւել գիշերը, յուլիսի 22-ին մտնում է այս գիւղից ոչ հեռու Աղաւնատուն գիւղը, բարձրանում է գիւղական քահանայի տանիքի վրա, որտեղից անդիմադրել է անյայտ կերպով յաղապել յիշեալ քահանայի յիմնամեայ մօրը. եղբւրթիւնը յայտնվում է միայն այն ժամանակ, երբ որ առաւօտեան կանուխ գլուխում են խեղճի ալյանդակված դիակը տնից քսան քայլ հեռավորութեան վրա գիւղամիջում մի սայլի տակ. գաղանը լսփել էր միայն ստիքները և լեարգն ու թղթերը:

Չանցած դեռ զրանից մի օր, յուլիսի 23-ին գիշերը մտնում է Հաջիլար կոչված գիւղը, որտեղ պատահում է իրան տան առաջ ցորնի կալում քնած մի չափահաս տղամարդու, գաղանը յարձակվում է սրտ վրա բռնելով ի հարկէ բերանից, բայց շնորհիւ այն հանգամանքի, որ վերոյիշեալը պատահամբ իր ձեռնափայտը դրած է լինում իրան բերանի վրա և այսպէս քնած, ուստի չարաճճու ժանիք-

ները չեն բաւականանում խեղդամահ անել վտանգութեան, որի արթնանալուց յետոյ անմեղապէս անյայտանում է: Հետեւել գիշերը ևս՝ ամսի 24-ին, Պղնաւուղ կոչված գիւղում է յայտնվում և վիրաւորում մի չափահաս աղջկայ գլխիցը:

Բացի այս բոլորից յուլիսի 25-ի գիշերը, գաղանը գաղանը մտնում է Կեօրիալու կոչված գիւղը, այդտեղ մտնում է տեղացիներից մէկի բակը, փայտեայ սանդուղքներով բարձրանում է տանիքը, որտեղ քնած են լինում բոլոր տղաներից, այդտեղից ևս կարողանում է արհաւիրել յափշտակել տանիցոց մի հատիկ 13 տարեկան արու գաւաղին. մի ժամից յետոյ արթնանում է հայրը, որը տեսնելով որդու բացակայութիւնը անկողնուց, հաւար է անում և շփոթված վար գցում իրան տանիքից, որից և քիչ չէ տուժում տարաբախտ հայրը. ասում են, որ նրա մի ոտքի ազգըր տեղահան է եղել անբուժելի կերպով: Երկար փնտրելուց յետոյ լուսաբացին միայն գտել են գիւղից մի վերստնաչափ հեռու զոնվածի գլուխը և ուկերները:

Իսկ յուլիսի 26-ին ցերեկով նրան տեսնում են Ալիբէկու գիւղի այգիների մէջ: Ասում են, որ դա ցերեկները պահվում է այգիների մէջ յատկապէս իր ձեռքով քանդված վազերի տակի վիհերում և ցորնի դէպքերի մէջ, իսկ գիշերները որսի և գուրս գալիս և օգտվում յարմար առիթից. նոյնպէս յայտնի է, որ շնիքը նրան չեն համարձակվում նրա վրա հաչել, իսկ հակառակ դէպքում էլ նա կատարաբար պատահում է և շնիքին:

Ինչպէս տեսնւմ, բորենին ևս այն անհամար վտանգներով մէկն է մեր կենսային դէմ ըօպէսպէս ապաւնացող, որի համար և մեր ժողովրդի լուրջ հոգացողութիւնն է պահանջվում:

8. Աւագեանց

Հաջիլարա

ՆԱՄԱԿ ՄԵՐ ՂԱՐԱՔԻՆՍԻՑ

Օգոստոսի 3-ին

Օգոստոսի 2-ն էր, ժամը 10-ը, երբ աղբատիկ գիւղի եկեղեցու գանգակը յայտնեց Վեհափառ Կաթողիկոսի գալուստը: Գիւղացիների և ամառանոց եկողների երկսեռ բազմութիւնը գիմնց դէպի Դիլիշան տանող խնուղին: Երիտասարդներից ոմանք ձիով, ոմանք կառքերով գնացել էին մինչև «Ս. Կիրակի» կոչված ուխտատեղին դիմաւորելու: Վերջապէս երկաց կառքը. ժողովուրդը խնայեց մի որոշակի տեղ և սրտատուրով՝ ապաւում էր հոգեւոր Պետին: Գիւղացիների կարգադրութեամբ, գիւղի «Աղ-Սախկանները» առաջ անցան և դրանցից մէկը Նորին Վեհափառութեանը մատուցեց մի համեստ սկուտեղի վրա գիւղի կողմից արեւելեան սովորութեան համաձայն աղ և հաց: Ժողովրդի «Կեցե՛ք Հայրիկ» արձագանք գտաւ շրջակայ բլուրների, անտառների և ձորերի մէջ: Կաթողիկոսի կառքը կանգնեց: Վեհափառն ընդունեց աղ ու հացը, օրհնեց ասելով՝ «Առ-լեւանտ տեղում զիս տակաւին չէք մոռացեր»: Կառքը առաջ շարժվեց մինչև Վեհի համար պարտաստված բնակարանը:

Այսօր առաւօտեան ժամը 8-ին Ղարաքիլիսայի երկաթուղու կայարանում մեծ ու փոքր, մարդ ու կին, սպասում էին Հայրիկին, որպէս զի հրաժեշտը մատուցանեն Վեհին:

Երկու խօսք գիւղի մասին:

Ղարաքիլիսան ունի երկու զբօսատեղի, որտեղ նուազում է զինուորական երաժշտական խումբը: Առաջինը կոչվում է պարկ և երկաթուղու կայարանի իրաւասութեան տակ է: Ընծելիքները մարդու են ու չոր, ուղիղ, ծառերը նորատունկ: Միակ պակասութիւնը կանոնաւոր զբօսատեղի լինելու համար կայանում է նորանում, որ չունի կանոնաւոր լուսաւորութիւն և բաւականաչափ նստելու տեղեր: Իւրաքանչիւր զբօսող ստիպված է իր սեփական լապտերը ունենալ այդ տեղ շրջելու և իրար գտնելու համար, եթէ չէ ուղում մթութեան մէջ խաբխափել: Երկրորդը «Արագած» անունով գտնվում է գիւղի հարաւային ծայրում: Լուսաւորութիւնը և պակասութիւնները այստեղ էլ նոյնն են ինչ վերոյիշեալ տեղում. միայն այստեղ աւելի փոքր է տեղը և խոնավ: Մեր կարծիքով, ոչ մէկը և ոչ միւսը յարմար չեն զբօսավայրի համար, այլ պէտք է տեղացի ձեռնհաս մարդիկ կամ երիտասարդութիւնը ստեղծեն յարմարութիւն մասաւանոց եկողներին համար և շինեն գիւղի կենտրոնում նոր զբօսատեղի ամեն յարմարութիւններով, որպէս զի գիւղի ամեն մի ծայրում ապրող կարո-

ղանայ գալ զբօսելու առանց նեղվելու թէ ֆիզիքապէս և թէ նիւթապէս: Բոլոր յայտնի ամառանոցներում սեզօնի տոմսակներ են բաժանում որոշ վճարով. ինչո՞ւ հեռու գնանք, հաս մինչև անգամ նոյն իսկ մեր հարեան Դիլիշանում: Ամառանոց եկողները վճարում են 3—5 ռ. վճար, որը երկու կողմին էլ—թէ ամառանոց եկողներին և թէ տեղացիներին օգուտ է տալիս:

Անընդհատ տեղացու անձրևների շնորհիւ խոտը այս տարի շատ առատ է. նոյնը և սպասվում է և ցորենի վերաբերմամբ:

Գ. Աղապարեանց.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Օգոստոսի 2-ին

Ագուլիսի և ագուլիսիների մասին մեր պարբերական մամուլում յաճախ թեր ու դէմ կարծիքներ և լուրեր են երևացել:

Ամառն է: Ագուլիսիների հարսանիքներին, ուրախութիւններին և խնջոյքների սեզօնը սկսվել է: Կանքը ետում է: Սաղամուրթիւն և շոյալութիւնը իր գազաթմակներին է հասնել: Բոլոր տեսակ հաւաքումների ժամանակ ագուլիսի կարո գցելու համար բարեյաջող հանգամանքը երբէք ձեռքից բաց չէ թողնում: Հայրը թէ հայութեան մի օր և իցէ անկիւնում խաղամուրթիւնը այնքան տարածված ու զարգացած լինի, որքան Ագուլիսում: Այդ ակտիւն են անձնատուր եղած ոչ միայն այսպէս ասած մասնագէտ խաղամուրթներ, այլ և երիտասարդութիւնը և միջին հասակ ունեցողներ՝ և ուսանողներ և մինչև անգամ պատանի աշակերտներ ևս ձեռնուկներ:

Լայնատարած կայսրութեան գանազան անկիւններից և մինչև անգամ արտասահմանից Ագուլիս են թափվել ամենավերջին մօզաների և շոյալութիւնների մէջ յղփացած բազմաթիւ ցիլինդրաւոր վաճառականներ, փայլուն կոճակաւոր ուսանողներ, և ևս ֆրանկ հագած գիւղացի երիտասարդներ և փախուսող օրիորդներ: Թող զարմանալի չըլեալ ընթերցողին, եթէ ասեմ, որ տեղիս պճնագաւրդ երկսեռ ներկայացուցիչներից շատերը իրանց փառանկաւոր ու զարդով և չքնաղ նիւս ու կացով կարող են նոյն իսկ մայրաքաղաքների համար հաղաթուղէ պարզ լինել: Իրոք չեն խեղճ թուրքերը Ագուլիսին «Պոզայ Պարիթ» անուն տալիս: Յիշուել որ այսպիսի մի հեռաւոր անկիւնի համար միանգամայն չը տեսնված երեւոյթներ են սրանք:

Կարելի է ասել, որ ագուլիսիների կամ աւելի լաւ է ասել զօկերի կեանքն ու ձգտումը ամբողջ հայութեան համար մի եզակի երեւոյթ է կղի. ժրջան միջուկ նման աշխատասէր և անտես զոկը Կողկաթի և Ընդհանրապէս Ռուսաստանի գանազան անկիւններում իր ցանցը գցելով, իր բացառիկ տնտեսագիտութեամբ և աշխատանքի ընդունակութեամբ մեծամեծ կարողութեան և փառքերի տէր գառնաւորով, երբէք իր բարոյական և անձնական կապը մայրենի հողից ու ջրից և զոկ բարբառից չէ կտրոււմ: Անկարելի է քան է, ասում են, որ պանդուխտ զօկը կամ զօկի բարբառը մոռանայ, կամ թէ չէ գոնէ քանի տարբեր մի անգամ պարզ Գողթմանի անդշ լեռների ու գաղտերին իր սրտագին ողջոյնները չը տայ: Այդ կողմից վերցրած նա խիստ հետեւողական է, և պէտք է խոստովանվել, որ մի քանի կէտերում իսկապէս շատ օրինակելի կողմեր կարելի է ձարել զօկերի ընաւորութեան մէջ, մի բան, որից տարաբաղաբար դուրի են միւս հայերը:

Անկարելի է մի երկու խօսք էլ չասել ագուլիսիների մի ուրիշ ազնի երեւոյթի մասին, դա՛ նրանց բամբասախրութիւնը և ասէկօսէկներն են, որ Ագուլիսում իր կատարեալ զարգացման է հասել: Հիներն ասում էին. «անգործութիւնն է մայր բոլոր չարիքները»: Երեւի հայրենիքում անգործութեան մատնվելով, ստիպված են տեղիս մեծապատիւ աղաները իրանց անմիտ պտուղական ասէկօսէկների տողալից բաց անել և ասին մի ներքիլ—աննիքիլ յանցանքներ և զլըր պատուութիւններ սրա նրա շնքին փախթիլ և անմեղներին միւր ծախել: Գոնէ այս անմիտ բամբասանքը ամօթ է, ամեն չար ու բարին տեսնող և շփոթ ագուլիսցու համար:

Այս բոլորից յետոյ մի ուրիշ հարց է ծագում, թէ զօկերը եւրօպական կրթութեան մէջ կուտորալի հետ անմիջական յարաբերութեան մէջ գտնվելով, ինչ չափով կարողացել կամ կարողանում են եւրօպական կուտորալի բարձրները իրանց խաւար ու կուսական լեռներից ներս ներսուծել:

Դժբաղդաբար, հարցի պատասխանը բացասական է, որ ընդհանրապէս զօկերը լուսաւոր եւրօպայի այնքան բարձրներից, գիտութեան ու գեղարուեստների ճշմարիտ պատճառներից, միմիայն արտաքին անմիտ մօզաներ, կապկանման նմանութիւններ, ձեւականութիւններ և բացասական նիւս ու կացն են սեփականացնում, բայց շատ քիչ քաղաքակրթութեան և լուսաւորութեան այն զօրեղ և կենսատու գործոններից, որոնց այնքան կարօտ է, ինչպէս իւրանք են սովոր անուանել իրանց պատմական խղճուկ Գողթմանը:

Արար

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք (Պոչկի նահ.) Բալին քաղաքից մի անձից, որ իր անունը չէ ուղում յիշատակել, ինչ բուրբի չբաւորների օգտին և բաժանեցինք մեր խմբագրութեան դիմող կարօտեալներին:

Մենք ստացանք Ասիաբաղից Դ. Մ. Թանգեանի միջոցով 10 րուրի 2 կօպէկ, որ գոյացել է մի երեկոյթից և նուիրողների ցանկութեամբ յանձնեցինք այն կարօտ և խեղճ օրիորդին, որի դժբաղդութեան մասին յայտնել էինք «Մշակի» մէջ:

Օգեսալի ֆինանսական աշխարհի ներկայացուցիչներից մէկը Պետերբուրգից հեռագիր է ստացել, որ միխիստրներ կօմիտէտը, ընկելով Նիշաների Ռուսաստանում ապրելու իրաւունքի հարցը, որոշեց փոխել 1882 թականի կանոններին առաջին կէտը: Այդ կէտ վերաբերում է հրէա արհեստագործներին, Ի գիւղիցայի վաճառականներին և բարձրագոյն զարգաց աւարտածներին: Միխիստրների կօմիտէտը վճռել է թոյլատրել այդ անձերին բնակութիւն հաստատելու գիւղերում և աւաններում: Բացի դրանից, Պետերբուրգից ստացվիլ են մասնաւոր տեղեկութիւններ, ասում են Օգեսալի լրագրից, որոնք հաստատում են, որ միխիստրներ կօմիտէտը տուել է լուրջ մի քանի արտօնութիւններ ևս Ի գիւղից հրէա վաճառականներին:

Օգեսալի և Կիեվի մէջ և մտադրութիւն կայ հիմնել հեռախօսի ցանց: Արդէն Կիեվի պատահաւորական շրջանի վարչութիւնը ուղարկել է այդ մասին իր կազմած մանրամասն ծրագիրը և երևում է, Ամբողջ գծի շինութեան ծախքն արժեւում է 200,000 ռուբլի: Գծի վրա հակելու համար հիմնարկվում են 3 միջին կայարաններ: Այդ հեռախօսով խօսելու համար վարձատրութեան չափը դեռ վերջականապէս որոշված չէ. ենթադրվում է 3 րօպէկ համար առնել 1 ռուբլի: Գծի և կայարանների շինութիւնն սկսվելու է ներկայ պատերազմը վերջանալուց յետոյ:

«Труд». Губ. Вѣд.» պաշտօնական թերթի մէջ տպված է. «Թագաւոր Կայսրը, միխիստրների կօմիտէտի որոշումի համաձայն, ներկայ տարվայ յուլիսի 3-ին Բարձրագոյն բարեհաճեց հրամայել փախել Տուրայի հասարակական գրադարանը, բոլոր ստացվածքը տալ տեղական քաղաքային ինքնավարութեանը, իթէ նա պարտաւորվի շարունակել զբաղարանի գործը»:

Մեզ հաղորդում են, որ Զուգլեւմանի «Պատիւ» վերնագրով պիէսի թարգմանիչ Յ. Դաւաղեօգեանը թարգմանել էլ Դիմօվի «Արեան Չախ» գրաման, որն այս տարի արժանացել է մրցանակի Պետերբուրգի գրական-գեղարուեստական ակումբի կողմից: Այդ գրամայի հաւելքին թարգմանութիւնը շուտով կը յանձնվի տպագրութեան. գրքի մէջ լինելու է և բնմի մանրամասն յատակագիծը:

ՆՈՒՆՈՒՑ մեզ գրում են. «Շուրխին մի ամիս սրանից առաջ արել է այն, ինչ անում են միւս քաղաքները. ընտրել է իր սանիտարական-գործադիր յանձնաժողովը և պարտը որոշել: Անա թէ ինչու յանձնաժողովի անդամները, ընտրված լինելով մեծ մասամբ առեւտրական դասակարգից, ընկած են իրանց անձնական շահերի ետևից. իսկ խօսակցութեան ժամանակ ժողովուրդին միխիստրում են ասելով. «Անա ցրտերը կը սկսեն և խօսերան չէ կարող մեր կողմերը ոտք դնել, իրոք ինչ ծախսեր անենք. նա դեռ Ռուսաստանի ոչ մի քաղաքում ոտք չէ դրել»: Բայց պարտնները մոռանում են, որ մեր այդ անկող հիւրը իր գործողութիւնը անում է մի քանի օրում և որը 1892 թ. Բագու ոտք դնելով, 3-րդ օրը

մեր քաղաքում էր գտնվում, և մենակ մեր գաղափարները դրանք մի քանի հարյուր գուհի, յամենայն դեպս վտանգի առաջն առնել հարկավոր է: Ներկայումս Նուրիյան անուշադիր է թողնված: Նուրիյան կարիք է գտնում բժշկական օգնություն: Ամբողջ Նուրիյան կայ մի-միայն երկու հատ բժիշկ, և բժիշկներից մեկը լինելով հայ, շատ լաւ ծանօթ է տեղային բարբառներին և կարող է մի քանի դատախազութիւններ կարգաւ ժողովուրդի համար, բայց դարձեալ Նուրիյան դուրի է այս բոլորից: Նուրիյան մի քանի մետաքսագործարաններ և բոլոր կաշեգործարանները համարեա աղանդներ են. իսկ եթէ շրջէր քաղաքի փողոցներում, կը պատահէր կիտված աղբերի, որոնք կատարեալ բացիլ-ների բնքն են ներկայացնում, իսկ շուկայում թաքախնեւում դարսած խակ քրքրի և վեր-ջիններս առաջինից պակաս չեն: Ուստի պարտ է և մեր սանիտարական—գործադիր յանձնա-ժողովին գործել իր կոչման համապատասխան, ինչպէս գործում են Կովկասի միւս բա-ղաքների սանիտարական—գործադիր յանձնա-ժողովները:

ՍՄԲՍԱ գիւղից (Արարատի վանքի վանք) մեկ գրում են. «Յուլիս ամիս 29-ին այստեղ, մի որբերային կնոջ 13 տարեկան մի տղան տա-ւար արածացնելու ժամանակ, երբ երեկոյեան վերադառնում էր տուն իր ընկերների հետ, մի անփորձութեան դո՛հ եղաւ: Տղան իր հետ գցած ձիւն չուանի ծայրը կապում է իր մէջ-քից և առաջ գնում: Ծանապարհին ձին մի անխթարթում իր կատաղի բնութիւնը առաջ է բերում և փախչում է, բայց տալով ետեկց միա-միտ և անմեղ երեխային և զարկերով քրե-րին՝ սպանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՋԱՐԻ ԾՈՒՐՁԸ

Նապոմակա՛ն կարուսները Պոս-Արսուի մօտ: Վաշինգտոնի հապոնական դեսպանութիւնը հրատարակել է հապոնական զօրքերի կորուս-տը Պորտ-Արտուրի մօտ, սկսած մարտի 15-ից մինչև 19 յուլիս, հաշուելով 12,055 մարդ: Այդ քանակից սպանվել են 54 օֆիցեր և 1509 զինուոր, վիրաւորված են 96 օֆիցեր և 6330 զինուոր: Բացի դրանից՝ սպանվել և վիրաւոր-վել են օֆիցերներ և զինուորներ 4066: Ամենա-ծանր կորուստներ հապոնացիները կրեցին Յգին-Չօուի մօտ, ուր սպանվեց 749 և վի-րաւորվեց 3455 օֆիցեր և զինուոր:

Նապոմակա՛նի գործունեութիւնը: Լեւոնեա-նից հետագայում են «ՐԵՍԵ» լրագրին. «Լուս երկոյթին հապոնացիները ժամանակաւորապէս դադարեցրել են ամեն մի յարձակողական գործունեութիւն Լեւոնեանի ուղղութեամբ, փոխադրելով իրանց հարուածները Արտուրի վրա: Այստեղ ամենքը անհնազանդ են նրա վիճակի մասին: Վերջին օրերը մի քանի յու-սանատ փորձեր կատարվեցին՝ վերջինում նրան շտուքով, բայց ամենքը յետ մղվեցին և հապոնացիները հակադէպ կորուստներ ու-նեցան: Սակայն հապոնացիները չեն խնայում զինուոր և սպանվածների տեղ նորերն են գա-լիս, իսկ մերեք կորուստները Պորտ-Արտու-րում չեն փոխարինվում. թնդանութիւնի սպա-ռումը նոյնպէս չէ լրացվում: Յուլիսի 29-ին լուր եկաւ, որ հապոնացիները կենտրոնացրել են Արտուրի դէմ 100 հազար զօրքից աւելի և 450 թնդանօթ, որոնց 50-ը մօրտրեներ են: Եթէ այդ լուրը ճիշդ է, ուրեմն Արտուրի հե-րոնների համար հասել է վճռական րօպէն. կամ Արտուրը կը գրմանայ, ստիպելով հապո-նացիներն կորցնել ապարդիւն ջանքերի մէջ անհամար զօրք, կամ կընկնի, նստելով հապո-նացիների վրա ոչ պակաս քան 80,000 ռուբլի: Ստացվել են մանրամասնութիւններ Արտու-րեան վերջին կռիւների մասին: Յուլիսի 12-ին Արտուրում արդէն գիտէին առաջիկայ շտուքի մասին. յուլիսի 13-ին, առաւօտեան ժամը 6-1/2-ին, հապոնացիները բացին արտիլլերիա-կան կրակ, և ուղիքը թափելով հանաջ Սարերի դիրքերը, Բարձր սարի, Շինիլիդի բռնանցքի, Իւլիլաձիի կատարի վրա: Գործում էին մօ-տաւորապէս 120 թնդանօթներ. նրանց թոււմ կային հեռու խիողներ: Շրջանները մէջ առ-մէջ փոխանակվում էին ֆուգասների և միլի-տարներն առաքելի հետ: Առաւօտեան ժամը 8-ին Գորտայ սարերի աջ թևի դիմաց երկաց հապոնական հետեակի թանձր սխւնը, որը ուղ-ղաձեւ արշաւում էր, և նրան աջակցում էր նաւատորմի կրակը: Այդ օրը թշնամին բաց թողեց 25—30,000 ռուբլի: Չը նայելով ար-

տիլլերիական կրակի սաստիկ աջակցութեան, յարձակումն ամենին չաշնորվեց հապոնացի-ներին. նրանք ամեն կողմից յետ մղվեցին, կրելով անազնի կորուստներ: Որոշված լինելով թողնել Գալլի սարերը, յուլիսի 17-ի ժամը 12-ին, մեր զօրքերը վերջնականապէս բաշվե-ցին դէպի Արտուր (ԲԵՍԵ):

Կարուսների գումարը: Վիեննայի «Neue Freie Presse» լրագիրը առաջ է բերում այն կորուստ-ների գումարը, որ պատերազմի սկզբից մինչև յուլիսի 4-ը (ն. տ.) եղել են: Կորուստների թուանշանները վերցված են ռուսական և հապոնական զինուոր շտաբների պաշտօնա-կան գեկուցումներից և ընդհանուր գումարը հասնում է 18,264 սպանված, վիրաւորված և գերի վերցրած երկու կողմերի համար, այսինքն գործող բոլոր զօրքերի մօտ 50%օ-ը, հաշուելով ռուսների և հապոնացիների թիւը միասին՝ 320 հազար մարդ: Ռուսների բաժինն է ցա-մաքային զօրքերի մէջ՝ սպանված՝ 36 օֆիցեր և 980 զինուոր, վիրաւորված՝ 103 օֆիցեր և 2089 զինուոր, գերի ընկած 20 օֆիցեր և 696 զինուոր: Նաւատորմում սպանված են 44 օֆի-ցեր և 920 զինուոր, վիրաւորված՝ 13 օֆիցեր և 220 զինուոր, գերի ընկած՝ 4 զինուոր: Բոլոր կորուստն է—216 օֆիցեր և 4800 զինուոր: Նապոմակա՛նի կորուստները ցամաքային զօրքի մէջ—սպանված են 159 օֆիցեր և 3750 զինուոր, վիրաւորված են 320 օֆի-ցեր և 6810 զինուոր, գերի են ընկած՝ 7 օֆիցեր և 28 զինուոր: Նաւատորմի մէջ—սպանված են 57 օֆիցեր և 1144 զինուոր, վի-րաւորված են 16 օֆիցեր և 840 զինուոր, գերի ընկած՝ 2 օֆիցեր և 15 զինուոր: Կորուստների ընդհանուր թիւն է—561 օֆիցեր և 12,587 զինուոր (HOB.):

Նապոմակա՛ն լրագիրները զայրոյթ են արտա-յայտում Գերմանիայի դէմ: «Loc. Ang.» թերթի Տօկիօի թղթակիցը հետագրում է, թէ հապո-նական լրագիրների մեծամասնութիւնը, ընդե-լով ռուսաց պատերազմական նաւերի Կիւս-Չաօ մոտնիւն հարցը, խիստ ըննադատութեան են ենթարկում Գերմանիայի գործողութեան եղանակը, իբրև չէզոք պետութեան: Մի քանի լրագիրներ նոյն իսկ սպառնական կերպով են յայտնում իրանց կարծիքը: Պորտ-Արտուրի մօտ յուլիսի 27 և 28-ին կատաղի կռիւ տեղի ունեցաւ: Նապոմակա՛նը գրաւեցին երեք բաւարէա և մօտեցան զինուոր ամբողջութե-ան իրան շատ մօտ տարածութեան վրա: Երկու կողմերն ևս մեծ կորուստներ կրեցին: Դրանից յետոյ հապոնացիները կրակ բացին Ունվա-նի սարից, որ տիրապետում է բերդային բաւարէաների և նաւահանգստի վրա: (T. A.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 օգոստոսի

ՎԱՇԻՆԳՏՈՆ (Բէյտէր): Նապոմակա՛ն դե-պանը յայտնեց պետական քարտուղար Հէյնի Նապոմակա՛նի պատասխանը Ռուսաստանի բու-ղդերին: Չիֆիւրի միջնադէպի առիթով: Վիկտոր Դաւեալին այդ բողոքի պատճենը տուեց լորդ Լանսդօւնին: Նապոմակա՛ն հրաժարվում է վի-րաւորմանը. «Բեյտէրին» ակնանաւոր և պըն-դում է, որ «Բեյտէրին» ամենին զինաթափ չէր եղած, որ նա լրացնում էր իր պակաս պաշարները և պատրաստ էր նաւահանգստից դուրս գալու հէնց առաջին յարձար առիթին: Եթէ որ «Բեյտէրին» փախած լինէր կուից յետոյ, այդ դէպքում համաձայն միջազգային իրաւունքի որոշումների, կարող էր ապաստան որոնել, բայց նա Չիֆու է գնացել, ինչպէս արդէն ապացուցված է, կուլիներին պատե-րազմական տեղեկութիւններ հաղորդելու նը-պատակով: Երբ հապոնական դեսպանը վստա-հութիւն յայտնեց, որ Միացեալ-Նահանգներն անկեղծ ցանկանում են Չինաստանի չէզոքու-թիւնը պահպանել, Հէյնը վճռաբար յայտնեց, որ ներկայումս կառավարութիւնը ոչ մի դէպքում թոյլ չի տա իրան միջամտելու այդ գործին և միայն դիպլոմատիական ճանապարհով կազ-մէ, Չինաստանի վարչական անկախութիւնը պահպանելու համար:

Չիֆու (Բէյտէր): Դեներալ Ստեսսը չա-փազանց քաղաքավարեցի հաշտութիւն խօսող հապոնական պատուիրակի հետ, որին յանձն-ված էր տեղ հասցնել անձնատուր լինելու առաջարկը. բայց զենեքալի պատասխանն անմիջական և բնորոշ էր: Յետոյ հապոնական մայորը խնդրեց 3 օր զինադադար՝ սպան-վածներին թաղելու համար, բայց զենեքալը մերժեց և կէրը վերսկսեց օգոստոսի 4-ին, առաւօտեան ժամը 10-ին: Պորտ-Արտուրից եկած ռուսները հաւատացած են, որ

բերը յաղթական կերպով կարող է դի-մադրել: Այ թեև վրա հապոնացիների գրա-ւած մարտկոցներն են № 3-ը և № 4-ը:

Չիֆու (Բէյտէր): Այժմ հապոնացիների բոլոր կորուստները Պորտ-Արտուրի շուրջը մի ամբողջ շարք ճակատամարտերում համարվում են 5000 (?) մարդ: Դրա մէջ են հաշւած և Դագուշանի վրա գրոհ տալու ժամանակ ու-նեցած կորուստները: Ռուսները միշտ ընկ-ղաքի մէջ: Հաւատացնում են, որ հապոնացի-ների աջ թևը հասել է բարձիթի մարմա-ձին հապոնական զինարանին՝ քաղաքից 1 1/4 մղոն հեռու: Նաւաւարանի շէնքերի մեծ մասը լուրջ կերպով ֆրասվել են:

ԼԵՍՕԵՍՆ (Բերլինի վրայով): Յուլիսի 10-ին Պորտ-Արտուրից դուրս եկած մի օֆիցեր հա-սաւ այստեղ: Ռազմամթերքի և պաշարների վերաբերութեամբ Պորտ-Արտուրում ամենին պակասութիւն չը կայ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ (Բէյտէր): Արտաքին գործերի մինիստրութիւնը ստացաւ մի հեռագիր, որը հաղորդում է, թէ հապոնական 7 ախանաւեր այս առաւօտ բռնեցին մի անյայտ ծագումի նաւ, երբ նա մտնում էր Չիֆու:

Չիֆու (Բերլինի վրայով): Բերը յանձնե-լու առաջարկին զենեքալ Ստեսսը հետեւալ պատասխանը տուեց. «Դանի դեռ գտն է մի մարդ կը գտնվի վերջին ամբողջութեան մէջ, Պորտ-Արտուրը կը շարունակէ պաշտպանվել»:

Վիէննա: Հաւառակ այն լուրին, որ իբր թէ Մարինըրալում հող է պատրաստված Մեծ-Բրիտանիայի և Աւստրո-Վէնգրիայի միջև դաշնագրի կնքելու միջնորդ դատարանի մա-սին, «N. Fr. Presse»-ն խմացել է, որ այդ լուրում ճշմարիտ է միայն այն, որ անգլիա-կան կարիքները հարց է տուել Վիեննայի կա-րիէտին այդ խնդրի առիթով, որը ներկա-յումս աւստրիական արտաքին գործերի մի-նիստրութեան կողմից մանրամասն ուսումնա-սիրութեան առարկայ է:

ԱԹԷՆԻ: Սաւոս կզգում նորից երկրաշարժ եղաւ, որ շատ տեղերում մեծամեծ ֆրասներ արեց: Սպանվել են մի քանի մարդիկ:

ԲԵՆԷՐԱՆ: Մինիստրների խորհուրդը որո-շեց խնդրել 100,000 ֆրանկ փոխառութիւն թագաւորի թագադրութեան ծախքերը ծած-կելու համար:

ՍՄԲՍՏՈՎ: Հաղորդում են Սամարայի նա-հանգում վաղուց չը տեսնված առատ հունձի մասին:

7 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒԳ: Թագաւոր Կայսրի ուղարկած հեռագիրը Պորտ-Արտուր՝ գնեւերալ-էյտանան Ստեսսին. «Իմ եւ ամբողջ Ռուսաստանի ա-նունով յանձնարարում եմ ձեզ շնորհակա-րբեցումներով. զօրին, հաւատարմութիւն եւ Արտուրի բնակիչներին յուլիսի 13, 14 եւ 15-ի նակասաւարտում սարած յաղթութիւններին համար: Ես հաստատ հաւատացած եմ, որ նրանք լիապէս պատրաստ են իրանց անձնուրաց ֆալու-թեամբ պահպանելու մեր գեներլ փառքի եւ ջե-րմագին շնորհակալութիւն եմ յայտնում բոլորին: Թող օրհնէ Ամենաբարձեալը նրանց ծանր անձ-նագոյն ֆալութիւնը եւ քոյ պաշտպանքն— նա Ար-տուրի ամբարիւնները բռնաւ միջնադէպի: «ՆԻԿՈՒՄԻ»:

Բիւլլետէն: Որդեկանութեան յաջորդող ժա-նանակամիջոցը Նորին Մեծութիւն թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի բոլորին ընական կերպով է անցկացնում, Իրան լաւ զգալով: Չեքմութիւնը 37, զարկերակը 90: Թագաւորաւոր ծննդութիւնը, ինչպէս և նախ-ընթաց օրերը, գտնվում է ըզձայի առողջու-թեան մէջ:

Հեռաւոր-Արեւելից օգոստոսի 6-ին պաշտօ-նական լուրեր չեն ուղարկվել:

Բարձրագոյն Անուանական Ուկալը Կառա-վարիչ Սկեստին. «Անհրաժեշտ ճանաչելով պատերազմական վիճակի մէջ գնել զանազան տեսակի զօրքերի մի քանի գոյութիւն ունե-ցող և նոր կաշմարկաւոր զորամասերը, նոյն-պէս և զօրացնել գործող ընտանի պահեստա-մասերը և հաստատութիւնները, Մենք հրա-մայեցինք Մեր ուկալով, որված այսօր զին-ւորական մինիստրին, այժմ և եթ անել, հա-մաձայն Մեր ցուցումների, այդ առիթով բոլոր անհրաժեշտ կարգադրութիւնները: Դրա հետ միասին հրամայում ենք. 1) գոյութիւն ունե-ցող զօրաշարժական բաշխման այդ առիթով եղած մասնաւոր փոփոխութեան համաձայն՝ նախկին հաւաքարկած թուով զինուորին հետե-ւալ գաւառներին. ա) Կիւնովի զինուորական շրջանից—Պորտալայի նահանգի Գաղապան, Չորոտօնօշան, Լօխկիցի և Նօրօլկու. Կուր-

կի՝—Պուտիլկան և Սաւրօսկօշան. բ) Մօսկ-վայի զինուորական շրջանից—Տվերի նահանգի՝—Վիշնիվօյցի և Կաշինսկի: Գ) Կազանի զինուորական շրջանից.—Սամարայի նահանգի՝—Նիկօլսկի: Սարատովի—Սարատովեան, Սերգօրեան, Ատկաբեան և Բալաշօվեան. Աստ-րախանի—Աստրախանեան և Չերսօկաբեան. Ուֆիմբեան, Բերսկեան, Սիմբիւրսկի—Այա-տիրեան, Արգաւովեան, Կորսուսեան, Կուր-միշեան և Սիլգանեան. Պերմի—Պերմեան. դ) Պետերբուրգի զինուորական շրջանից. Պետեր-բուրգի—Գոլովեան և Լուժսկի. Նովոօրոլի—Դեմեանսկի, Կրեստեցկի և Տիլիսկի: Պափ-վսկի—Պափովեան, Օստրովեան և Վէյսէնյու. Արխանգելի—Արխանգելեան, Կոնստան, Ալեք-սանդրեան Մեդենսկի, Պինէօեան, Պեդօրեան և Շենկուրեան. Օլոնիցկի—Պետրօվօշեան, Վիտեբեան և Պուրօօեան. 2) Վերոյիշեալ գաւառներից մի քանիսում: Բացի պահեստա-զօրքերի կոչից, զինուորական ծառայութեան համար ձիեր ժողովել, համաձայն գործող զօ-րաշարժային կարգերի առաջին կետի փոփո-խութեան: 3) Համաձայն գոյութիւն ունեցող բաշխման մի և նոյն մասնաւոր փոփոխու-թեանը, իսկական ծառայութեան կոչել հա-րկաւոր եղած թուով պահեստի զօրքերի մի քա-նի տեսակները, որ հաշի մէջ են հետեւալ նահանգներում. ա) Կիւնովի զինուորական շրջա-նի Պորտալայի նահանգի Պրիլուեան գաւա-ռից. Նարիվի նահանգի Նարիվի գաւառից. Կիւնովի Պօլօի և Չերնիվօվի նահանգներից: Բ) Մօսկվայի զինուորական շրջանի՝ Տվերի և Նիժնեօրոլի նահանգների մի քանի գաւառնե-րից: 4) Իսկական ծառայութեան կոչել կայս-րութեան սահմաններում ապրող պահեստի բանակի այն բոլոր օֆիցերներին, որոնք, գործող բաշխման համաձայն, պէտք է լրացնեն այժմ պատերազմական զորութեան մէջ գրվող և կամ զօրացող զօրամասերը, նոյնպէս և հարկը պահանջած չափով պահես-տի զինուորներին, որոնք նոյն բաշխմանը թուով առաջուց նշանակված են օֆիցերներին փո-խարինելու նոյն զօրամասերում: Թող Կառա-վարիչ Սկեստը անէ սրա գործադրութեան համար բոլոր անհրաժեշտը: Իսկական զին-ւորին Մեծութեան Սիւրեան ձեռքով ստո-րագրված է. «ՆԻԿՈՒՄԻ»: Պետերօֆ, 1904 թ., օգոստոսի 5:

ՄՈՒԿԻՆԻ: (Սիւր. թղթ.): Օգոստոսի 4-ին մեր զօրքերը նորից գրաւեցին Դալինդուշա-նեան լեռնանցքը և յետ մղեցին հապոնացի-ներին դէպի Յիւնանշան: Յայտնվել է, որ հա-պոնացիների ոյժերը այդ շրջանում 2000 հո-գուց աւելի չեն: Մնացած ճակատի վրա գոր-ծերի զորութեան մասին տեղեկութիւններ չը կան: Եկող անձրևները անկապած ազդում են երկու բանակների վճռական գործողութիւննե-րի յապաղման վրա:

ՏՕԿԻՐՈ (Բէյտէր): Պաշտօնական հեռագիրը յայտնում է, որ Պորտ-Արտուրը թողնելու ա-ռաջարկութիւնը արված էր միայն կանանց, երեխաների, հոգեւորականների և դիպլոմատ-ների, ինչպէս և չէզոք պետութիւնների ցա-մաքային և ծովային զօրքերի օֆիցերների վերաբերմամբ: Նապոմակա՛նը զարմանա-կա յայտնում գնեւերալ Ստեսսի վճիռ առիթով՝ դիմանալ մինչև վերջին ծայրը և արտայայ-տում են գնեւերալին համակրութիւն, խորա-պէս ափսոսալով, որ նա չէ կանխում ճանա-չել ընդդէմադրութեան անօգուտ լինելը այ-սուհեան: Նոր ցուցումները կան, որ ռուս-ները յարձակվել են Գնեւանի վրա: Նապոմա-կան ծովային և առեւտրական նաւարկութեան դաշնակցութիւնը որոշել է կազմել կամաւոր նաւատորմ օժանդակ կրէյսերներից:

ՇԱՆԳՀԱՅ (Բէյտէր): Դեներալ Կուրօպա-կինը գտնվում է Անշանշտում վեց դիվիզիա-ներով և հարիւր թնդանօթով: Ծովապետ Կա-միսուրան Սասեթը եղած ժամանակ թղթակցի հարցմունքին խոստովանեց ռուսների բաշխ-ութիւնը և տեղեկութիւնը: Նաւալինարանը, ուր կարկատվում է «Ասիուրը» պատկանում է անգլիական ընկերութեան և ենթակալ չէ չե-նական իրաւաստութեան, ուստի հարց է ծա-գում, արդե՞ծ անգլիական իշխանութիւնների պարտականութիւնը չէ որոշել և ստիպել յար-գել չէզօքութեան պահանջները:

Չիֆու (Բէյտէր): Օգոստոսի 6-ին եկան էլի երկու ջոնկաներ Պորտ-Արտուրից մի բա-նի ռուսների և չինացիների հետ և հարդրե-ցին, որ Ստեսսը անձնատուր լինելու մեր-ժումից յետոյ, հրամանագիր հրատարակեց, կոչելով ամենքին բաշարի կուի թշնամու դէմ մինչև արեան վերջին կաթիլը:—Չինացիները յայտնում են, որ Պալիշտանը, որեւից հապոնացիները սաստիկ ուրախվում էին

Պարտ-Արտուրը, նորից ուսանելու յետ եւ վերջ-
բերելու անցանցները նախանշելու հետեւ Շու-
շին: Գերմանացիները Յոլանդացիներու ուղարկե-
ցին հարկեր հոգուց բաղկացած մի խումբ 15
մոլոն տեղ ղեկավար արեւելք բաղկացող, որպէս զի
խափանեն եւ անցանցները փորձել շինել Բա-
ղիս-հեռագրական կայարան:

ՎԱՇԻՆԳՏՈՆ (Բէյլետէր): Ստացվել է հեռա-
գիր անյայտ նաւի գրաւման մասին Ձիֆուում:
Այդ գրաւմում ասացուցանում է եւ անցանկան
նաւատարմի որոշումը անգլիական լինական չե-
զօրութեան հարցի մանրամասնութիւնները:
Շանգհայի ամերիկական ընդհանուր հիւպա-
տար հեռագրում է պետական ղեկավարաման-
տին, որ տառապալ չը գտնացրեց ուսաց ընդ-
հանուր հիւպատոսի խնդիրը և որ «Գրագո-
վոյը» պէտք է կամ զինամիաբ լինի կամ դուրս
գալ նաւահանգստից օգոստոսի 7-ին, իսկ
«Ասիոյը» 19-ին:

ԼԱՍՎԱՍՄԱՍ (Բէյլետէր): Համբուրգ-ամերի-
կական ընկերութեան «Վալենցիա» շոգենաւը
հասաւ Կարդին՝ ուսաց կրէյսէրին ածու
հայթհայթելու համար:

ՍՕՖԻԱ: Էդուարդ Թագաւորը շնորհեց իշ-
խան ֆերդինանդին Վիկտորիայի շքանշանը:
Եկան 200 սերեր երկաթուղային ծառայողներ,
որոնց բոլորը ծառայակիցները սրտագին ըն-
դունեցին: Ուսաց կրթական հաստատութիւն-
ները սանները սարքեցին քաղաքային այգում
տնտեսութեան ուսուցիչներու միջնակարգ օգ-
տին:

Կ. ՊՕԼԻՍ (Վոլֆի գործ.): Մեծ վեկիր Ֆե-
րիդ փաշան յանձնեց սուլթանին հրաժարա-
կան թիւրք-ամերիկական միջնակարգ ա-
սիթով:

ՍԱՆՔԱՆՏԻՍԿԱ: Նանկինի ամերիկական
հիւպատոսը այստեղ հասաւ և յայտնեց, որ
եւ անցանկան օֆիցները վարժեցնում են
զինուորների ահագին խմբեր: Կենտրոնական
Ձիւնատարմում զօրքերը զինուորական են Մաու-
զիւնի հրացաններով և ունեն գնդակահար-
ներ, որոնք ձեռք են բերվել չինական զօրքի
կարիքների համար: Միայն Նանկինում միշտ
վարժվում են 5000 հոգի:

ԽՈՐԱԳԻՐ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՂԻ
Պետերբուրգի ժամացույցով
Փակագծի մէջ թիֆլիսի ժամացույցով

Պ օ ս տ ա զ ն ա յ ք Բագուից դուրս է գալիս երեկ.
6 ժամ 37 ր. (7 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկ.
12 ժ. 37 ր. (1 ժ. 35 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից
ցերեկ. 1 ժ. 24 ր. (2 ժ. 22 ր.), հասնում է Բաթում
գիշերվայ 1 ժ. 45 ր. (2 ժ. 43 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Բագուից դուրս է գալիս ցի-
րեկվայ 12 ժ. 37 ր. (1 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս
առաւօտ. 5 ժ. 52 ր. (6 ժ. 50 ր.), դուրս է գալիս
Թիֆլիսից 6 ժ. 29 ր. (7 ժ. 27 ր.), հասնում է Բա-
թում երեկ. 6 ժ. 53 ր. (7 ժ. 51 ր.):

Պ օ ս տ ա զ ն ա յ ք Բաթումից դուրս է գալիս
առաւօտ. 5 ժ. 6 ր. (6 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս
երեկ. 5 ժ. 28 ր. (6 ժ. 26 ր.), Թիֆլիսից դուրս է գա-
լիս 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.), հասնում է Բագու ցերեկ.
12 ժ. 10 ր. (1 ժ. 8 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Բաթումից դուրս է գալիս
առաւօտ. 9 ժ. 45 ր. (10 ժ. 41 ր.), հասնում է Թիֆ-
լիս երեկ. 10 ժ. 35 ր. (11 ժ. 33 ր.), Թիֆլիսից դուրս
է գալիս 11 ժ. 10 ր. (12 ժ. 8 ր.), հասնում է Բագու
ցերեկ. 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.):

Պ օ ս տ ա զ ն ա յ ք Թիֆլիսից դեպի Երևան դուրս
է գալիս գիշեր. 11 ժ. 50 ր. (12 ժ. 48 ր.) հասնում է
երեկ. 4 ժ. 32 ր. (5 ժ. 30 ր.):

Պ օ ս տ ա զ ն ա յ ք Երևանից դուրս է գալիս ցի-
ր. 12 ժ. 14 ր. (1 ժ. 12 ր.), հասնում է Թիֆլիս առ. 5 ժ.
24 ր. (6 ժ. 22 ր.):

Պ օ ս տ ա զ ն ա յ ք Սեւաստոպոլից դեպի
Կարս դուրս է գալիս առ. 10 ժ. 46 ր. (11 ժ. 44 ր.)
հասնում է Կարս ցերեկ. 2 ժ. 6 ր. (3 ժ. 4 ր.), Կար-
սից դուրս է գալիս երեկ. 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.),
հասնում է Ալեքսանդրապոլ երեկ. 7 ժ. 12 ր. (8 ժ. 10 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Թիֆլիսից դուրս է գալիս 10
ժամին երեկ. (10 ժ. 58 ր.), հասնում է Բաթում առ.
8 ժ. 19 ր. (9 ժ. 7 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Բաթումից դուրս է գալիս Ե-
րեկ. 9 ժ. 33 ր. (10 ժ. 31 ր.), հասնում է Թիֆլիս առ.
7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Թիֆլիսից դեպի Բագու և Սա-
կա դուրս է գալիս Երեւոպոլի օրերը ցերեկ. 5 ժ.
25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Բագու առ. 6 ժ. 9 ր.
(7 ժ. 7 ր.):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Բագուից դուրս է գալիս լոյս
ուղբաց գիշեր 12 ժ. 53 ր. (1 ժ. 51 ր.), հասնում է
Թիֆլիս ցերեկ. 2 ժ. 2 ր. (3 ժամին):

Մ ա ղ ա զ ն ա յ ք Թիֆլիսից դեպի Իօթմա
դուրս է գալիս երեկ անգամ առ. 8 ժ. (8 ժ. 58 ր.) և
2 ժ. 40 ր. (3 ժ. 38 ր.), իսկ Բորժոմից դեպի Թիֆլիս
ցի-ր. 1 ժ. 8 ր. (2 ժ. 6 ր.) և երեկ. 4 ժ. 8 ր. (5 ժ. 6 ր.):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆԻ
(Կուկիս, վորոնցովի արձանի հանդէպ)
Ա մ ե ո Ր, բ ա ղ ի կ ի Ր ա կ ի օ Ր ե Ր ց,
Ա Ռ Ո Ց Ց Ն Ե Ր ը

2րդ զմեռ—9—10 ժ. աշի, ներքին և նաւարդային
Մ. Գ. ԱԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մարթու, վերեւական
և վերաբուժում: 2. Ի. ԲԱՅԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբուժութեան
կանոն և երեխայից 5.

7. Ի. ԳԱՆԻՆՑ—12—1 ժ. աղանջի, քթի և կոկորդի 5.
9. Բ. ԲԱՐԻՍԵԱՆՑ—1—1 1/2 ժ. ներքին և երեխա-
յից 5.

Ա. Պ. ԳԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1 1/2 ժ. ներքին և երեխա-
յից 5.

Ա. Գ. ՍՈՐՈՂՈՎ աստամբույժ. 9—11 ժ.
Ե Ր Ե Ղ Ն Ե Ր ը

Ն. Ն. ՌՈՍՏՈՒՄԵՂՈՎ—5—6 ժ. վերաբուժ. մարթու և
վերեւական 5.

Պ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նաւարդային (երեխայութեան
թիւն), ներքին և վերեւական 5.

ԿԻՆ-ԲԱԺԵՂ ԶԵՐԲԵՆԻՄ—7—7 1/2 ժ. մանկաբուժու-
թեան և կանոն 5.

Գ. Բ. ԲԱՐԻՍԵԱՆՑ—7 1/2—8 ժ.
Վճարը 50 Կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (Կօն-
սիլիտի) և օպերացիայի համար տաւանջին:

Օ. Ա. ԱՌԱՋԻՆՑՈՎ—աստմ. ծաղկահատ և բժշկական
մարմնամարզ. գիմն. 11—1 ժ.:

Հիւանդանոցում ընդունվում են և գէշերօթիկ հի-
ւանդներ:

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Յ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
Ա. Չ. Բ. ՀԻՄՆԱԴԱՆՈՐ ԻՆՏԵՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վերամիջօրեակալ փողոց № 8: (Ե.Ո.) 10—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բժշկ. Բ. Նախարարեան
տեղափոխվելով Թիֆլիսից ԲՕՏՕՎ
Հիւանդանոցին ընդունում է 11—12 ժ. առ.
և 7—8 ժ. երեկոյեան
B. Садовая, 136, д. Бакалова.
(Ե. Կ. Ե. Ե.) 48—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գր. Տեր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւո-
րապէս կրծքի) և երեխայից հիւանդութիւննե-
րի, ունի բէնագէտներ և կարգէմ. 154. Միջա-
կէտան պրօպէկա, տէլեֆօն 825.
(Ե. Կ. Ե. Ե.) 70—105

Մաղրաւի ուսումնարանի համար
հարկաւոր է երկրորդ
ուսուցիչ՝ ցենզաւոր. առնիկ 400 բուրլի: Տըր-
վում է սենեակ, լուսաւորութիւն և այլն:
Դիմել՝ Шемаха, сел. Матрасы, попочит.
А. Агриеву. 2—3

Յանկանում եմ
գնել Թիֆլիսի մէջ 1, 2, 3, 4, 7, 8 և 9 քա-
ղաքամասերում, արամիայից և Կախախնակայ
փողոցից ոչ շատ հեռու մի կտոր գետին 60—
300 սաժ., որ կարող է լինել հին շինութիւն-
ների հետ, ամենը մինչև 4000 բուր. արժէքով:
Հասցէն՝ յլ. Паскевича, д. 18 НИЖ. 3Г
А. И. К. (Ե. Կ.) 6—10

ՎԱՌՎԱՌԻ ԵՒ ՍՏԵՓԱՆ
ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ
ուսումնարաններում աւանդվում են՝ կրօն
(հայոց լեզուով), ուսաց լեզու, թուրքաւո-
թիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և արա-
վայ ընթացքում պատրաստվում են ընդունելու
երեխաներ զանապահ միջնակարգ դպրոցների
և Լազարեան ճեմարանի համար:
Ուսումնի սկսվում է օգոստոսի 10-ից: Բա-
նով Դ/Վ, Տուրքանիսկանա փողոց, տուն եղբ.
Ունանովների, № 4. (ա. օ) 5—25

ԴԱՍԱԳՐԱԲԵՐ ԿՐՈՆԻ
Յատկապէս պատրաստած պետական դպրոց-
ների համար, (Թուրքաւոթիւն հոգեւոր և ուսում-
նարանական վարչութիւններից) աշխատախ-
րութիւն Երեւիկ աւագ քան. Երզնկանի:
1. Առաջին գրքի, պատրաստական դասա-
րաններին համար «Գլխաւոր աղօթքները» (Ի-
րանց բացատրութիւններով) և տօներին հա-
մառու պատմութիւնները՝ 5-րդ տպ. գինն է
20 կոպէկ:
II. Երկրորդ գրքի, «Հին-ուխտ» (30 դաս-
քի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյա-
կան դրոյցներով հանդերձ) գինն է 30 կոպէկ:
Իրավաճառներին, ուսուցչներին համար 300/0
գինով, առանց ճանապարհամարի: Դիմել
Тифлисъ, прот. Езникиу Еркинянцъ կամ
Тифлисъ, Центральный книжный магазинъ.
(Ե. Կ. Ե.) 4—25

Հանգամանքի ճեղքալացում
ԱՐԱՐԱՆԻ ՀԱՆԼԱՐԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, օգոստոսի 8-ին
Հայ և վրաց թատերասերների խումբը կը
կը ներկայացնէ հայերէն լեզուով

ԻՍԹԱՐԱՍԼԱ
Կով. 4 արար. 6 պատ. հեղ. Գ. Սուրբուհանի:
Մասնակցում են.—Օր. օր. Բէգիշանեան, Բու-
շուկուրի, Անահիտ, պ. պ. Գուրգենեան, Լաշա-
րեան, Դուրջեան, Մարկոսեան, Չորանկարեան
և ուրիշները:
Սաղամիւրցիներին կը նուագէ երաժշտական
խումբը:
Սկզբնէ 8 1/2 ժամին երեկոյեան:
Տեղերի գինը 10-ից մինչև 50 կոպէկ:
Վարչութիւն Արարեանի
1—1 Կարգադրել Գ. Նասիճէ

Սկզբնէ 8 1/2 ժամին երեկոյեան:
Տեղերի գինը 10-ից մինչև 50 կոպէկ:
Վարչութիւն Արարեանի
1—1 Կարգադրել Գ. Նասիճէ

Հ Ե Ր Մ Է Ս
Տ Պ Ա Ր Ա Ն Ա. Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն
Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվել է իր հին բնակարանից—(Միջալեւան փող. № 81) նոր շինութիւնը՝
Մաղաքեան փող. № 15 Ալեքսանդրեան այգու հանդէպ
Եւ կապի հաստատելով եւրօպական նշանաւոր ֆերմաների հետ, շարունակաբար ստա-
նում է արտասահմանից տաքարանական տեխնիքայի նորութիւնները.—(Թղթեր, ներկեր,
զարդեր և այլն) որոնք և նախաւորութիւն են տալիս Հափաւոր գնորդ
ՄԱՔՈՒՐ ԵՒ ԶԻՆԸ ՏՊԱԳՐԵԼՈՒ
Ամեն տեսակ գրքեր, գունատիպ պատկերներ, հաշիւներ, բանկներ, տոմ-
սեր և այլն:
Օսու Բաղադրիցի Դիմել՝ Тифлисъ, типография „Гермесъ“. արտասահմանից՝
Tiflis Imprimerie "Hermes". 2—10

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».
16/29-ին օգոստոսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Sidon» շոգենաւը,
(փոխանակ «Danube»-ի) հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Ջմիրնիս,
Պիրէյ, Սիւր, Մարսէյլ, Հաւր և Լոնդոն:
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նոյնպէս և մինչև Շանգհայ
(2-ին աստիճանով), կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններին համար դիմել
ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արժուոյն գալէթիւն,
Թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ Թիւ 608: Դրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և
5—7-ը երեկոյեան բացի կիրակի օրերից: 1—1

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Բաքու, Прачешная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է սալ ունկերիներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն
եւ պատրաստել հմուտ հաւաքագրներ: Աւարտողները ստանում են աստիճաններ: Կուրսե-
րում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուրքաւոթիւն և թուրքաւոթիւն համարի
վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առեւտրական և բան-
կային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առե-
ւտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղութիւն
ձեռագրի). 7) Ուսուցումը գրող մեքենայի վրա: Ուսումնի սկսվելու է սեպտեմբերի 20-ից:
Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից
մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և
ուղարկվում են ձրաբար: Օտարաբաղադրացիները դիմում են Բաքու, учредителю ком-
мерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 11—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Մ Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
(Тифлисъ, Сололаки, Термонтовская ул., № 9)
Առեւտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առեւտրական կրթութիւն
տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահ-
ներ: Աւարտողները ստանում են աստիճաններ:
Աւանդելի առեւտրականը սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրա-
կան թուրքաւոթիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուր-
քաւոթիւն համարի վրա. 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Առեւտրական և մուր-
հակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռք ուղղելը:
Ձրի ուսուցումը ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարագմունքները կուր-
սերում լինում են ամեն օր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից,
ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժա-
մը, կուրսերի հիմնովի բնակարանում, Սոլալակում, Ալեքսանդր Փրիզմովի տանը № 9,
Սերգիւկայի և Լեւոնաւոյի փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները
կարելի է ստանալ ձրաբար կուրսերի հիմնովի բնակարանում: Օտարաբաղադրացի դի-
մում են՝ Тифлисъ, С. П. Мануэляну. (Կ. Ե.) 15—25

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Մ Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
(Тифлисъ, Сололаки, Термонтовская ул., № 9)
Առեւտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առեւտրական կրթութիւն
տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահ-
ներ: Աւարտողները ստանում են աստիճաններ:
Աւանդելի առեւտրականը սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրա-
կան թուրքաւոթիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուր-
քաւոթիւն համարի վրա. 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Առեւտրական և մուր-
հակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռք ուղղելը:
Ձրի ուսուցումը ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարագմունքները կուր-
սերում լինում են ամեն օր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից,
ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժա-
մը, կուրսերի հիմնովի բնակարանում, Սոլալակում, Ալեքսանդր Փրիզմովի տանը № 9,
Սերգիւկայի և Լեւոնաւոյի փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները
կարելի է ստանալ ձրաբար կուրսերի հիմնովի բնակարանում: Օտարաբաղադրացի դի-
մում են՝ Тифлисъ, С. П. Мануэляну. (Կ. Ե.) 15—25